



«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2 , հեռ. 060621238, 2-38, ss@ysmu.am

«ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետի 10-րդ, 12-րդ ենթակետերը.

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Պրոռեկտոր Ե.Ս.Սահակյանի կողմից ներկայացված՝ 2020-2022թթ Համալսարանի միջազգայնացման քաղաքականության ուղղությամբ կատարված աշխատանքները գնահատել բավարար (ցեկույցը կցվում է) (23-02-02-01).

2. Հանձնարարել պրոռեկտորներ Լ.Ռ.Ավետիսյանին, Ե.Ս.Սահակյանին, Կ.Բ.Ենկոյանին, Ա.Մ.Մինասյանին, ընդհանուր բժշկության ֆակուլտետի դեկան Կ.Մ.Բարոյանին և կրթության որակի ապահովման և գնահատման բաժնին.

1) Համալսարանի ամբիոնների և կառուցվածքային ստորաբաժանումների միջազգայնացման՝ հաշվառման ենթակա գործունեության չափանիշները վերլուծել և գնահատել բարձրագույն բժշկական կրթության միջազգայնորեն ընդունված չափորոշիչներով, սահմանել հաշվետվությունների մեխանիզմները և ժամանակացույցը (23-02-02-02).

2) օտարերկրյա համալսարանների հետ համագործակցության ոլորտում մեծացնել դասախոսների, ուսանողների, կլինիկական օրդինատորների, փոխանակային՝ ուսումնառության, մասնագիտական կատարելագործման, համալսարանի հետազոտությունների մասնաբաժինները (23-02-02-03).

3) ուսումնական ծրագրերի մատուցման որակը բարձրացնելու համալսարանական համագործակցության և միջազգային ծրագրերի



շրջանակներում կրթական գործընթացներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընդգրկել բարձր որակավորում ունեցող օտարերկրյա անձնակազմ, որպես հրավիրված կամ այցելու դասախոս (23-02-02-04).

4) Համալսարանում ապահովել միջազգայնացմանն ուղղված կայուն և ներառական միջավայր՝ օտարերկրյա սովորողների հասարակական ակտիվության, միջազգային կոնֆերանսների, աշխատաժողովների, մշակութային խոնարհման միջոցառումների կազմակերպման միջոցով: Այս աշխատանքներում ակտիվ դեր հատկացնել Համալսարանի ուսանողական խորհրդարանին, կարիերայի կենտրոնին և օտարերկրյա ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնին (23-02-02-05).

3. Հանձնարարել պրոռեկտորներ Ե.Ս.Սահակյանին, Գ.Ա.Ավետիսյանին, Ա.Ա.Ղազարյանին պարբերաբար իրականացնել կրթական միջազգային շուկայի պահանջարկի, առաջարկի և ուսումնական ծրագրերի մատուցման գնային քաղաքականության ուսումնասիրություն, յուրաքանչյուր տարվա փետրվար ամսին ներկայացնել ուսումնասիրությունների համատեղ տեղեկանք-հաշվետվություն (23-02-02-06).

4. Հանձնարարել պրոռեկտոր Ե.Ս.Սահակյանին և միջազգային համագործակցության բաժնին.

1) հայտ պատրաստել և 2023թ. մայիս ամսին ներկայացնել «Եվրոպական դպրոցների ասոցացիային» (AMSE)՝ համալսարանի անդամակցության նպատակով (23-02-02-07).

2) Տարածաշրջանի, Եվրոպական երկրների համալսարանների հետ ՀՀ օրենսդրությանը համապատասխան կոնսորցիումների ձևավորման միջոցով ռազմավարական նշանակության ոլորտներում իրականացնել համատեղ միջազգային ծրագրեր և նախագծեր՝ համատեղ, ինչպես նաև միջազգային կառույցների կողմից ֆինանսավորվող աղբյուրներով (23-02-02-08).

5. Սոցիալական ներգրավվածության և սոցիալական պատասխանատվության ոլորտում Համալսարանի գործունեության մեջ ներգրավել նաև ԵՊԲՀ շրջանավարտների և հայ բժիշկների միավորումներին (23-02-02-09).

6. Հանձնարարել պրոռեկտորներ Ե.Ս.Սահակյանին, Գ.Ա.Ավետիսյանին՝ ուսումնասիրել օտարերկրյա բժշկական բարձրագույն կրթական ծառայությունների գները և մշակել ու ներկայացանել առաջարկություն օտարերկրացի ուսանողների ուսման վարձավճարների չափերի փոփոխության վերաբերյալ՝ հաշվի առնելով Համալսարանի մրցունակության ապահովման և դրա բարձրացման հետ կապված հարցերը: Կատարել գնային փոփոխության կոնկրետ առաջարկ և ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանը (23-02-02-10).

7. Հաստատել մասնագիտական և շարունակական կրթության կենտրոնի մանկաբարձության, գինեկոլոգիայի և վերարտադրողական բժշկության ամբիոնի «Սաղմնաբանությունը վերարտադրողական բժշկությունում» և «Վերարտադրողական բժշկություն (ռեպրոդուկտոլոգիա)» լրացուցիչ մասնագիտացումների ծրագրերը (23-02-02-11).




8. Հաստատել ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով Համալսարանի
ինտերնատուրայում հետբուհական ուսուցում անցնող «Ընդհանուր
ստոմատոլոգիական գործունեություն» մասնագիտությամբ ինտերների ռազմական և
ռազմաբժշկական պատրաստության ծրագիրը (23-02-02- 12).

9. Հաստատել «Ամբիոնների և դասախոսական կազմի մասին» կանոնակարգի
փոփոխությունները և լրացումները (կցվում է) (23-02-02- 13).

10. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր, պրոֆեսոր
Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝



Բ. Գ. Դ., ՊՐՈՖ. Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ. Գ. Դ., ՊՐՈՖ. Տ. Գ. ԱՎԱԳՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ